DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

"ՎԱՎԵՐԱՑՆՈՒՄ ԵՄ"
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՆԱԽԱԳԱՀ Ռ. ՔՈՉԱՐՅԱՆ

"21" հունիսի 2006 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ

1 հունիսի 2006 թվականի N 827-Ն

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ
ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

"Մշակութային արժեքների արտահանման եւ ներմուծման մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 2-րդ մասին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծման կարգը՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՍՏՈՐԱԳՐՎԵԼ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԿՈՂՄԻՑ
2006 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 16-ԻՆ

Հավելված
ՀՀ կառավարության
2006 թվականի հունիսի 1-ի
N 827-Ն որոշման

ԿԱՐԳ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԱՐԺԵՔՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ

1. Սույն կարգով սահմանվում է մշակութային արժեքների ժամանակավոր ներմուծման գործընթացը՝ "Ժամանակավոր ներմուծում" մաքսային ռեժիմով:

2. Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս՝ հայտարարատուն մաքսային մարմին է ներկայացնում հայտարարագիր, մշակութային արժեքներն ու դրանց լուսանկարները (3 օրինակից):

Լուսանկարների բացակայության դեպքում հայտարարատուն իր միջոցներով, մաքսային հսկողության ներքո, իրականացնում է մշակութային արժեքների լուսանկարումը:

Լուսանկարները ներկայացվում են Հայաստանի Հանրապետության մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարության (այսուհետ՝ լիազորված պետական մարմին) սահմանած պահանջներին համապատասխան:

3. Մաքսային մարմնի պաշտոնատար անձը մշակութային արժեքները համեմատում է լուսանկարների հետ՝ դրանց դարձերեսներին լրացնելով մշակութային արժեքների տվյալները (տեսակը, անվանումը կամ վերնագիրը, հեղինակը, ստեղծման ժամանակը, ստեղծման վայրը, նյութը, չափերը (քաշը), բաղկացուցիչ մասերի թիվը, վիճակը):

Մշակութային արժեքների առանձին տվյալների՝ հեղինակի, ստեղծման ժամանակի, ստեղծման վայրի, նյութի ճշգրտման անհնարինության դեպքում նշվում է "անհայտ" բառը:

4. Մշակութային արժեքներ ժամանակավոր ներմուծելիս՝ մաքսային ձեւակերպումների առանձին գործողություններ կարող են իրականացվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ մաքսային ձեւակերպումների համար սահմանված վայրերից դուրս:

5. Մաքսային մարմնի պաշտոնատար անձը լուսանկարների դարձերեսներին լրացված տվյալները շրջագծում է, հաստատում անձնական կնիքով եւ մաքսային օրենսդրությամբ

DISCLAIMER: As Member States provide national legislations, hyperlinks and explanatory notes (if any), UNESCO does not guarantee their accuracy, nor their up-dating on this web site, and is not liable for any incorrect information. COPYRIGHT: All rights reserved.This information may be used only for research, educational, legal and non-commercial purposes, with acknowledgement of UNESCO Cultural Heritage Laws Database as the source (© UNESCO).

սահմանված կարգով ձեւակերպում դրանց ժամանակավոր ներմուծումը՝ "Ժամանակավոր ներմուծում" մաքսային ռեժիմով:

Մաքսային մարմնի պաշտոնատար անձի կողմից կնքված մշակութային արժեքների լուսանկարների մեկ օրինակը պահվում է մաքսային մարմնում, մեկը տրվում է հայտարարատուին, իսկ երրորդ օրինակը՝ լիազորված պետական մարմնին:

Մշակութային արժեքների կնքված լուսանկարները հիմք են հետագայում մաքսային ձեւակերպումների նպատակով դրանց նույնականացման համար: Անհրաժեշտության դեպքում մաքսային մարմինն իրավասու է իրականացվող աշխատանքներին Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներգրավելու պետական իրավասու մարմինների մասնագետների եւ փորձագետների:

6. Ժամանակավոր ներմուծվող մշակութային արժեքների մաքսային սահմանով բացթողումից հետո՝ 5-օրյա ժամկետում մաքսային մարմինը մշակութային արժեքների ներմուծման մասին գրավոր (պատվիրված նամակով) տեղեկացնում է լիազորված պետական մարմնին՝ կցելով լուսանկարների մեկ օրինակը:

UNESCO Cultural Heritage Laws Database (Copyright and Disclaimer apply)